ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՆԹԵՈՆՈՒՄ

Վիրհայոց թեմը, հետևելով հին տոմարին, Թարգմանչաց տոնը նշեց հոկտեմբերի երրորդ շաբաթ օրը՝ 21-ին:

Առավոտյան Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում, ի հիշատակ Սրբոց Թարգմանչաց մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Բաթումիի և Աջարիայի հայության հոգևոր հովիվ Տ. Կիրակոս աբեղա Դավթյանը: Հընթացս Ս. Պատարագի հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ կարևորելով մայրենի լեզվի, դպրության և մշակույթի դերը հայապահպանության գործում:

Սուրբ Պատարագին ներկա էին Վրաստանում ՀՀ արտագարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը, Վրաստանի Խորհրդարանի պատգամավոր Վան Բայբուրթյանը և համայնքային, գրական ու հասարակական մի շարք գործիչներ:

Հավարտ Սուրբ Պատարագի հոգևոր դասի առաջնորդությամբ հավատացյալ ժողովուրդը, մշակույթի գործիչների ու հայկական դպրոցների սաների և ուսուցիչների ու ներկա ժողովրդի հետ, բարձրացավ Թբիլիսիի Հայ Մշակույթի Գործիչների պանթեոն, որտեղ հանգչում են 18-20-րդ դարերի հայ մեծանուն մտավորականներ:

Թբիլիսիի նախկին Խոջիվանքի գերեզմանատունը 1938 թվականին ավերվեց Բերիայի հրամանով և վերածվեց «Բարեկամություն»8 զբոսայգու, որի արևելյան անկյունում, Ռաֆֆու մահարձանի շուրջը, ստեղծվեց Հայ Մշակույթի Գործիչների պանթեոնը:

Վիրահայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ Պանթեոնում կայացավ հոգեհանգստյան արարողություն, որի ընթացքում հիշատակվեցին Խոջիվանքում ամփոփված անվանի հայորդիները: Ապա Սուրբ Գևորգ եկեղեցու երգչախումբը, Լուսինե Հովհաննիսյանի խմբավարությամբ, բազմաձայն գեղեցիկ հնչողությամբ կատարեց հայերեն և վրացերեն հոգևոր ու ազգային երգեր:

Տոնի կապակցությամբ Պանթեոնում բացվել էր ցուցահանդես՝ Թբիլիսիի հայտնի նկարիչ և ուսուցիչ Ռոբերտ Ներսեսովի արվեստի ստուդիայի երիտասարդ նկարիչների մասնակցությամբ:

Այնուհետև շնորհավորական և ողջույնի խոսքերով հանդես եկան թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոսը, Վրաստանում ՀՀ արտագարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը, Վրաստանի Խորհրդարանի պատգամավոր Վան Բայբուրթյանը և Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան Պետական հայկական դրամատիկական թատրոնի տաղանդավոր դերասան Լևոն Չիդիլյանը: Բանախոսները ցանկություն հայտնեցին, որ սույն միջոցառումը դառնա ավանդական: Թարգմանչաց տոնակատարության մեծաշուք հանդիսության սկիզբը Թբիլիսիում դրվեց 2005 թվականից՝ հայոց գրերի գյուտի 1600-ամյակի տոնակատարությունների շրջանակում:

ԿԱՏԱՐՎԵՑ ԱՐԱԿՈՎԱՅԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՕԾՈՒՄԸ

2006 թվականի հոկտեմբերի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և բարձր տնօրինությամբ, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկո-